

Ե Ա Ն Թ Է Ի Ն

(Փոխադրութիւն լորդ Բայրոնից *)

Ոչ Արեւելքի կլիմաների մէջ
Ուր թափառել եմ ես աստանդական,
Թէն այնտեղի գեղեցկուհիներն
Համբաւուած են միշտ որպէս աննըման,
Եւ ոչ մինչև իսկ անուրջների մէջ
Որ ցոյց են տալիս հոգուն մի պատկեր,
Որի ետեւից հառաչում է մարդ
Թէ էր երազ են այդպիսի դէմքեր,
Ոչ իսկութեան մէջ, ոչ անիսկութեան
Չեմ տեսել երբէք էակ քեզ նըման,
Ոչ էլ կը փորձեմ քեզ տեսնելուց յետ
Գծագրել պատկերն այդ գեղեցկութեան:
Այն մարդկանց համար որ քեզ չեն տեսել
Բառերս անհաս են.
Իսկ նոցա, որոնք հայել են դէմքիդ,
Այլ ևս ի՞նչ ասեն:

Երանի՜ թէ միշտ մընաս ինչպէս այժմ
Պահես խոստումը զարնանդ օրերի,
Սիրտըդ տաք, բայց սուրբ. սիրոյ պատկերը
Այս երկրի վերայ, առանց թեւերի.
Եւ այնպէս անբիծ որ երբէք կոյսը
Մտածութեամբ իսկ քեզ չը մօտենայ,

*) «Զալդ հարուղի» նախերգանքը:

Այլ անմեղութիւնդ այսպէս յաւիտեան
 Հրապոյրներիդ հետ անբաժան մընայ:
 Եւ, անշուշտ քո մայրդ, որ գուրգուրում է
 Մանկութեանդ վերայ կաթոգին այնպէս,
 Այն ինչ փթթում ես ծաղիկի նըման
 Այն ինչ ժամ առ ժամ գեղեցկանում ես,
 Քո դէմքի վերայ իր ապագայի
 Խաղաղ ծիածանն արդէն տեսնում է,
 Որի երկնային բոյրերի առաջ
 Ամեն տրամուլթիւն անհետանում է:

—
 Ո՛վ Արեւմուտքի մատղահաս փէրի
 Երջանիկ եմ ես որ իմ ամերը
 Կրկնապատիկն են քո տարիների.
 Անցան ինձ համար սիրոյ ժամերը.
 Տարփանքից ազատ իմ աչքն այսուհետ
 Կարող է դիտել քեզ անյոյզ սրտով,
 Եւ հասունացող քո գեղեցկութեան
 Լոկ հանդիսատես լինել անվրդով.
 Բաղդաւոր եմ ես որ ինձ չէ տրուած
 Տեսնել թառամումն այդ հըմայքներիդ,
 Բայց էլ բաղդաւոր որ երբ կը տանջուին
 Մատղահաս սրտեր ի սէր աչքերիդ,
 Գէթ իմն այն բաղդից ազատ կը լինի
 Որ դու պահել ես քեզ սիրողներին,
 Որոնք պիտի զգան շատ վիշտ և անձուկ
 Սիրոյ ամենից սիրուն ժամերին:

—
 Օհ, թող այդ աչքը, նըման այծեամի,
 Մերթ վառ ու խիզախ, մերթ մեղմ, ամօթխած,
 Որ հըմայում է երբ թափառում է
 Եւ շլացնում է երբ կանգ է առած՝
 Մի ակնարկ ձգէ այս էջի վերայ,
 Եւ մի լոկ ժըպիտ շնորհէ իմ երգին,

Ժպիտ, որ պիտի խնայէիր գուցէ
 Թէ այլ զգացմունք յուզէր իմ հոգին:
 Մի հարց աներ ինձ թէ ինչո՞ւ իմ երգս
 Ձօնում եմ քեզ պէս դեռահաս մէկին
 Շնորհիր մի ժպիտ, հիվ կոյս նազելի,
 Եւ թոյլ տուր միայն որ իմ պըսակին
 Կցեմ աննըման
 Անարատ շուշան:

Ահա զուգուեցաւ անունդ իմ երգիս.
 Եւ բարի աչքեր երբ «Հարողդ» կարդան,
 Քեզ կը հանդիպեն ամենից առաջ,
 Եւ ամենից յետ քեզ կը մոռանան:
 Եւ երբ կ'աւարտուին օրերն իմ կեանքի,
 Եթէ անցեալի այս ձօնը խոնարհ
 Գրաւէ մատերը քո հրեշտակային
 Դէպ քեզ երգողի մոռացուած քընար,
 Յիշիր դու յայնժամ, որ այդ է իղձըս
 Եւ յիշատակիս բաւ է այդ միայն,
 Եւ ինչ որ Յոյսը չի ակնկալում
 Բարեկամութեան շնորհիր դու այն:

ՅՈՎ.-ԽԱՆ ՄԱՍԵՀԵԱՆ